



Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция «Ммасъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ առաջօրեայ).

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով.

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ.
Տ է Լ է Ք Օ Ն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դաշնագրերի տարիքը.—Ներքին Տեսչական
Թիւն. Մամուլ. Նամակ Հին-Ղրիմից. Նամակ
Խմբագրութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Փրանսիայից. Արտաքին
լուրեր.— Հեռագրեր. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒ
ԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գիւղական ու
ուսուցիչը:

ԴԱՇՆԱԳԻՐՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ

Եւրոպական պետութիւնների հերթա-
կան հարցերից մէկը ներկայումս միջազ-
գային մարտերի հարցն է: Իւրաքանչիւր
պետութիւն աշխատում է այնպիսի դաշ-
նագրեր կապել իր հարեանների հետ,
որ նա կարողանայ փոքր մարտով մտնել
իր ապրանքները ուրիշ երկրներ, իսկ այդ
երկրների ապրանքները եւթարկէ իր
երկրում ծանր մարտերի, մի խօսքով դիւ-
րացնել իր ապրանքների տարածելը ա-
մեն տեղ, իսկ ուրիշների ապրանքների
համար ստեղծել դժուարութիւններ, բա-
ցի այն դէպքերից, երբ ներմուծվող նիւ-
թերը անհրաժեշտ են տեղական արդիւ-
նաբերութեան զարգացման համար:

Սակայն պետութիւնները, մէկը միւսի
հետ մրցելով, ստեղծել են միմեանց համար
մի շարք դժուարութիւններ: Ծանր մար-
տերի դէմ հարեան պետութիւնը պատա-
խանում է նոյնպէս ծանր մարտերով: Այդ-
պիսով առաջ է գալիս մի անբնական, ար-
հեստական դրութիւն, որ պահպանում է
իր գոյութիւնը շատ անգամ միայն շնոր-
հիւ այն բանի, որ միասնական պետութիւ-
նը ոյժ չունի դիմադրելու եւ իր շահերը
պաշտպանելու:

Նորերս Բերլինում լոյս տեսաւ Վիլհոլմ
Լէօի մի աշխատութիւնը համաշխարհային
առևտրի ուղղութեան մասին: Այդ աշխա-
տութեան մէջ հեղինակը քննում է պե-
տութիւնների ձեռք առած միջոցները
մարտային ասպարէզում եւ գալիս է այն
եզրակացութեան, որ Գերմանիան պար-
տաւոր է նպատակայարմար երկարամեայ
դաշնագրեր կապելով ապահովել իր առևտուրը,
այլապէս նա մեծ դժուարութիւնների կը
հանդիպի համաշխարհային վաճառանո-
ցում եւ ստիպված կը լինի իր նոր դար-

գացած արդիւնաբերութիւնը վտանգի են-
թարկել: Հեղինակը մեծ նշանակութիւն է
տալիս Ռուսաստանի շուկաներին գերմանա-
կան արդիւնաբերութեան համար եւ աշ-
խատում է համոզել, որ պէտք է կայաց-
նել առևտրական համաձայնութիւն այդ
երկու խոշոր պետութիւնների մէջ փոխա-
դարձ գիշտութեամբ, չը հասցնելով գործը
մարտային պատերազմի:

Երկու երկրներին, Ռուսաստանին եւ Գե-
րմանիային մէջ բանակցութիւնները դեռ
չեն սկսված, բայց բազմապիսի նիւթ է
ժողովվում երկու կողմերում եւ բանակ-
ցութիւնները հեշտացնելու համար: Առև-
տրական դաշնագիրը առանց ազդեցու-
թեան չի մնայ նաեւ մեր կողմից արդիւ-
նաբերութեան համար, որ այժմ ունի
համաշխարհային շուկայում վաճառահա-
ման նիւթեր:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Ն

Մարդիկ ծիծաղելի են դառնում մասնաւոր
այն ժամանակ, երբ սկսում են իրանց ոյժերից
շատ վեր գործեր վճել: Մօսկվայում գոյու-
թիւն ունի մի ընկերութիւն, որի նպատակն է
սովորեցնել անդամներին չը խմել գինի, օդի
եւ այլ միասնակ խմիչքներ: Քանի այդ ըն-
կերութիւնը կատարում էր իր պարտքը, ոչ ոք
օրինչ չէր կարող ունենալ նրա դէմ: Մարդիկ
միայն գոհ կը լինէին, որ կան խելօք, հասկա-
ցող վաճառականներ, արհեստագործներ, որոնք
չեն թունաւորում իրանց ալկոհոլով եւ աշխա-
տում են ուրիշներին էլ հասկացնել, թէ որքան
միասնակ է այդ խմիչքը: Բայց ահա մի օր
ընկերութեան անդամները ուզում են աւելի
մեծ, աւելի բարդ խնդիրներ էլ վճել: Եւ
վճում են գրկել համաշխարհային հոշակ վա-
րելով կոծա Տօլստոյին ընկերութեան պատա-
ւոր անդամի կոչումից: Երէկ այդ մասին մենք
տեղեկութիւն հաղորդեցինք Մշակիչ ներքին
լուրերի բաժնում: Ինչպէս պէտք էր սպասել,
ամբողջ ուսաց մամուլը իրողոված է այդ
վարձուքից: «Русскія Вѣд.» լրագիրն առում
է, որ այդ վճիռն ամենեւին անպատուութիւն
չէ ուսու հոշակաւոր գործի համար, չէ կարող
նրա համաշխարհային փառքի դալիւնայ պատ-
կից պակսեցնել մի ամենափոքր տերեւի ան-

գամ Այս, դա ճիշդ է, բայց կատարված փա-
ռք մի ուրիշ ցաւալի երեւոյթ էլ ունի, հասա-
րակական երեւոյթ: «Новости» լրագիր աշխա-
տակից Սակմարով գրում է.

Ամենից վատը այստեղ այն է, որ այդ
«ժողովար» մարդիկ ոչ ոքի կողմից հարկա-
ւոր դիմադրութեան չը հանդիպեցին: Չգուե-
լի է այն, որ նորից կրկնվեց նոյն պատմու-
թիւնը, որ արդէն պատահել է ամենալաւ,
ամենաազդանդաւոր ուսու գործընդի-
րերը զրգարեցնելի մի խմբակ հալածում էր
Պուշկինին, ուսու հասարակութիւնը նրանց
չէր դիմադրում, եւ միայն այն ժամանակի,
երբ այդ հալածանքը արդողութեամբ վերջա-
ցաւ, միայն բանաստեղծի դիակի վրա լսվե-
ցին ցաւակցութեան ուշացած ձայներ: Ինչ
է առ, միթէ էլի կրկնվում է հին պատմու-
թիւնը: Միթէ ուսու հասարակութիւնը էլի
նորից անտարբեր կերպով պիտի նայէ, թէ
ինչպէս են ծաղրում մեծ գրողին կոծա Տօլ-
ստոյ ութուն տարեկան է դառնում: Պէտք է
պահել, պէտք է փաշտպան, պէտք է թանգ
գնահատել մեծ ծերունու կեանքի իւրաքան-
չիւր րօպէս: Չէ որ մերն է նա, մեր հարս-
տութիւնն է, մեր փառքը: Կէ որ, եթէ մենք
նրան չը պաշտպանենք, չը պահպանենք, այլ
եւս չի մնայ զգուշանք, որին մենք արժանի
չենք լինի, չի մնայ մի զգուշի անուն, որ
իրաւունք չէին ունենալ խփել մեր երեսին
այն բոլոր ազգերը, որոնք Տօլստոյին նոյն-
քան իրանց են համարում, որքան մենք—
մերը: Եւ նրանք արդար կը լինեն: Միայն
անկուտորական, տգէն հասարակութիւնն
է, որ չը գիտէ պատել եւ պահպանել իր մեծ
մարդկանց:

Տօլստոյին անպատուելու ցանկութեամբ այդ-
պիսի ամօթալի վճիռ կայացնող ընկերութեան
անդամները գլխաւորապէս արհեստագործներ,
վաճառականներ են: Եւ դուրս է գալիս մի
այսպիսի բան. աշխարհի բոլոր կողմերում իր
հակա տաղանդով հիացմունք ազդող մեծանուն
գրողի հոգու մէջ մտնողները, նրա ներքին
համոզմունքների մասին վճիռներ կայացնող-
ները բազարի, առևտրի մարդիկ են: Դա օր-
բապօրութիւն է: Եւ հասարակութիւնը իր
անտարբեր վերաբերմունքով դէպի այդ սրբա-
պղծութիւնը, ճիշտ որ, ցոյց է ապրիս, թէ նա
չը գիտէ, որ իր մէջ ունի Տօլստոյի պէս մի
հակա միտք: Իսկ սա մի շատ վատ վկայութիւն
է նրա հոգու եւ մտքի մասին...

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՂՐԻՄԻՑ

Յունիսի 10-ին

Ղրիմի սքանչելի եւ գեղեցկատեղի ընտ-

գոտով խթնել նրանց հին-հին դարերի փոշիով
մինչեւ ականջները լցված գուլաներով իսկ ժո-
ղովուրդը պատարաստելու, կրթելու: համար ան-
հրաժեշտ է մեզ նախ ունենալ իրանց կոչման
համար արժանաւոր ապագէս նախապատ-
րաստված ուսուցիչներ ու քահանաներ:

Իւրաքանչիւր անհատ, մեր կարծիքով, եր-
կու տեսնի պարտք ունի կենսութեան. առաջինը
դէպ իր անձնականը (իր անձը, իր ընտանիքը),
գերդաստանը եւ այլն) եւ երկրորդը՝ դէպի հա-
սարակութիւնը, դէպի ընդհանրութիւնը: Եւ ոչ
ոք իրաւունք չունի յիշեալ պարտքերից մէկը
զանց առնել յօգուտ միւսի, այլ երկուսն էլ
պիտի ընթանան զուգընթաց չաւաղով: (Անձ-
նագոհութիւնը—բացառութիւն է):

Ուստի, եթէ գիւղական ուսուցիչը ներկայ
պայմաններում փորձէր իրագործել պ.
Յաթ.—ի յիշած բոլոր պարտականութիւնները,
անտարակոյս ոչ միայն պիտի մեղանչէր իր
ընտանիկան պարտքերի դէմ, այլ եւ ոտով-
զլնով, առնու ու տեղով գոհ պիտի դառնար իր
ոյժից բարձր ձեռնարկութեան, որ պ. Յաթ.
գիւղական ուսուցիչի հասարակական պարտքն է
համարում, առանց նպատակի հասնելու, որին
ժողովուրդը ամենայն իրաւամբ կոչում է Քիչի
նախաւորը:

Ուժից բարձր եմ ասում, որովհետեւ բաւա-
կան է լով մի անգամ մի բանի մէջ միայն գիւ-
ղացու հաւատը խախտել եւ նա այլ եւս չի
հաւատայ ձեր ասած ու հաղար ու մի շօշա-
փելի փաստերով ապացուցած ճշմարտութեան
էլ: Ինչու գիւղացին ծուռ աչքով է նայում

թեան մի խորհուրդն է գտնվում այն բազմա-
դարեան, ամրապարիսպ եւ հոշակաւոր ս. խաչ
վանքը, որի վրա գործ զրված զարմանալի
ճարտարապետական հմտութիւնը շատ է գրա-
ւել հնագէտների լուրջ ուշադրութիւնը:

Այս վանքը շինել են հոյակապ Անիից դադ-
թած հայերը: Նա Հին-Ղրիմ քաղաքից 4
վերստ հեռաւորութեան վրա է գտնվում: Մին-
չեւ հանգուցեալ խորհիւ եպիսկոպոս Ստեփա-
նէի վանահայրութեան պաշտօնի ստանձնու-
մը վանքը շատ ողբալի վիճակի մէջ էր, չու-
նէր նոյն իսկ կարգին ճանապարհ, եւ կտրու-
բարձրանալը չափազանց վտանգաւոր էր: Երբ
հանգուցեալ խորհիւն, Պետրերուրդի քարոզ-
չութեան եւ հովուութեան պաշտօնից տեղա-
փոխեցին այստեղ, նա եռանդուն կերպով
սկսեց վերանորոգումներ անել վանքի շինու-
թեան վրա: Նրա առաջին հոգածութեան ա-
ռարկան եղաւ ճանապարհի շինութեան ձեռ-
նարկումը: Հին-Ղրիմից մինչեւ ս. խաչ վանքը
վանքը, ինչպէս առաջ, նոյնպէս են այժմ չու-
նի եկամուտի մի առանձին աղբիւր, որով կա-
րելի լինէր առանց կողմնակի օգնութիւնների
նորոգութիւններ անել եւ նրա անհրաժեշտ
պիտոյքները հոգալ: Պէտք էր գտնել նուիրա-
տուներ: Խորհիւ եպիսկոպոսի պէս ճարտար
քարոզչի համար դժուար չէր նոյն իսկ քարո-
ցած սրտեր փափկացնել, եւ ահա նրա խօսքի
շնորհիւ գտնվեցին նուիրատուներ, որոնց
նուիրած փողով նա նախ շինեց 4 վերստ տա-
րածութիւն ունեցող ճանապարհ, անտառի
միջով, ապա 16 սենեակներ վերանորոգեց,
պարսպի շուրջը պատշաճաբար հաստատեց, մի
խօսքով այցելողների համար ամեն տեսակ
յարմարութիւններ ստեղծեց: Եւ ահա այդ
ժամանակներից միայն կարող ու կանօս մտաւ
վանքի մէջ: Սակայն Ստեփանէի վերջին ան-
գամ վանքից բացակայելու միջոցին եւ մասնա-
ւանդ նրա մահից յետոյ վանքը զրկվելով ար-
թուն հսկող աչքերից, կարճ միջոցում սկսել
էր կամաց-կամաց կորուստվել, իր ունեցածից
զրկվել: Այժմ վանահայր է Ն. Վ. Նահապե-
տեանցը: Ս. խաչ բոլորովին զուրկ էր ջրից:
Նահապետեան իրադրապետը գտաւ կուրացած
աղբիւրների ակնները եւ այժմ ջրի կատարեալ
առատութիւն է: հոգում են երեք սառն լուս-
աղբիւրներ:

Վանքի կալուածներից մամնաարդիւնաւորը
Պերեկոպոլում 7000 ռուբլի տարեկան եկամուտ
է բերում, սակայն այդ պատկանելի գումարը

բժշկին: փաստաբանին, անասնաբոյժին... Բը-
ժշկին չէ հաւատում, որովհետեւ գիւղի բոլոր
այն հիւանդները, որոնց այցելել է բժիշկը՝ մե-
ռել են: Իսկ այդ բանում գիւղացին երբեք չէ
մեղադրում իր սեփական տգիտութիւնը, որ
բժիշկ կանչում է այն ժամանակ միայն, երբ
հիւանդի հոգին արդէն ճարման է հաւաք-
վում, այլ անպայման պահանջում է, որ թէ
գոխուրդ է՝ թիղ լաւցնէ (առողջացնէ), թէ չէ
ինչի հըմը փարան կառնէ ու ջրը կոխելուն
կաշէ... »

Գիւղացին դատաստանական գործ ունենա-
լիս միշտ «բոռ քօռնայ» (անգիտակցաբար)
ընկել է հարեցող, խաբեայ փաստաբանների
ձեռքը, որոնք միշտ «պողպէլ» են խեղճ գիւղա-
ցու վերջին կօպէկները, առանց մի գործ կա-
տարելու: Դրա համար էլ, գոնէ մեր գաւա-
ռում, գիւղացին չէ հաւատում նրանց: Վերջին
ժամանակներս միայն մի քանի կարգին փա-
տաբաններ բարձրագրին իրաւաբանի վարկը
գիւղացու աչքում: Անասնաբոյժներից էլ սար-
սափում են, որովհետեւ ինչպէս էր ասու-
ածում՝ «հէջ մէկը չը տեսնեց ախր իր տնա-
չիններուն մէջ հիւանդ մալմ սաղցնելով (բու-
ժելով), սալթ սաղ ու հիւանդ (միայն առողջ
ու հիւանդ) իրար խառնել ջարդելը մը գիտեն.
աղա ըլլի որ զոյալ (հեշտ) ապրելու սանեաթըմ
է (արհեստ է)»...

Ուրեմն սրբան մեծ փորձառութիւն ու հըմ-
տութիւն պիտի կարողանայ ձեռք բերել գիւ-
ղական ուսուցիչը, լով ընթերցանութեամբ
բժշկութեան, իրաւաբանութեան, անասնաբու-

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԻՒՂԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉԸ

Բերեք մի փաստ եւս:
Պատմած շատ հին ժամանակի անցք չէ:
Քաղաքային դպրոցի մի ուսուցիչ, որ ոչ մի
կախում չուէր գիւղից ու գիւղա-
ցուց, 15 տարի նոյն տեղում ապրելուց ու
գրեթէ տեղացի դառնալուց յետոյ, ամուսնի մէջ
մերկացնում է տեղական վախճաններից զա-
մենաշօջի: քստմնելի արարքները իսկոյն բաց-
վում են արեւն-արցունքով չարախված ճա-
րամ ոսկիների երկաթի դռները: ու փաստա-
բանը, թղթակալը լրագրի մի քանի համար-
ների հետ խտտած վազում է դատարան: Բայց...
Դատարանի արդար գտաւ գրողին, վարժապե-
տին... Է՛հ ինչ փոյթ, թող արդարանայ, էլ
միջոց չը կայ չէ՞ անօթի... Ի հախից դալու
նոյն տապերով տապկոտող մի քանի աղուէս-
ներ, որոնց զթիւն նոյնպէս դիպել էր Վար-
ժապետը, ձեռք-ձեռքի տուին ու առանց ա-
մաշելու սկսեցին ամենքի աչքի առաջ լարել
նենգ թակարդը: Յիշեալ ուսուցիչը մատնու-
թեան զօհ դարձաւ:

Ասեմք թէ դա ուսուցիչ բարոյական պարտքն
էր, որ կատարեց ու պարտքը կատարելու հա-
մար, ինչպէս սովորեցնել է մեր այս մալու ու
մուծ կանաչում, փառաւորապէս տուժեց: Բայց

ստանում է էջմիածինը, ոչ մի կողմից չէ թողնելով վանքի բարեգործությունը համար։
Վանահայրենի տաղավորն ունի սրահայր միջնորդությունը բարեգործներ որոնելու և վանքի աւերակների նորոգումները հազար ներդրումներով գլխի ընդունելու։ Այստեղ զրիմյիները երկու անգամ են տարեկան ուսում գնում—վերափոխմանը և խաչվերացին Ամսոյով ընթացքում եւս անպակաս են լինում և։ խաչ վայելողների թիւը։ Բնութեան այս հրաշագեղ և փոփոխ ծոցում հանգչելիս, նրա մաքուր յատակ ուղի չնչելիս, մարդս կարծես հոգեով վերածնվում, վերակենդանանում է, սառն աղբերակների խօսած երաժշտութիւնը լսելիս, ամանաւանդ զիչեր ժամանակ, ակամայ ընկղմվում են խոր յիշողութիւնների մէջ կամ մոռանալով վշտերը ու տառապանքները՝ զմայլած՝ տանվում, փոխադրվում են մի այլ կարադական աշխարհ, ուր կարծես կեանքի ճոխ վայելքներն ու անհուն երջանկութիւնը յաւիտենական են...

Թ. Մ. Թումանյան

ՆԱՄԱԿ ԽՐԱՄԱՐԿԱՆ

Ռաշտ, մայիսի 28-ին

«Մշակ» լրագրի № 84-ի մէջ Ռաշտից Ս. Խորապետութիւնով մի անհին լուր էր տպւած, որ իբր թէ Լիւնդոնից Ռաշտի աղայոց զբոսը տարեկան 75 թուման տուրքը դադարեցրել է այն պատճառով, որ զարոցի շինութեան համար միանուագ վճարել է 500 թուման։

Հոգաբարձութիւնս յայտնում է, որ Լիւնդոնից ներկայացուցիչը, յարգելով հանգուցեալ Լիւնդոնցիների յիշատակը, ամեն տարի կանոնաւոր կերպով վճարում է 75 թումանը, եւ այս տարվան էլ, դեռ պ. Ս.-ի գրածին առաջ՝ վճարված էր։

Անդամներ հոգաբարձութեան՝ Ս. Տէր-Ստեփանեան, Աւետիս Մ. Գորգանյան

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Ռուսաստանի հետ Վրաստանի միացման հարկւրամակի առիթով կատարվելիք տոնախմբութիւնները, ինչպէս հաղորդել էինք մենք, կը սկսվեն սեպտեմբերի 25-ից։ Տոնախմբութիւնները կատարվելու են հետեւեալ ծրագրով։ Սեպտեմբերի 25-ին տեղի կունենան ազնւականների հանդիսաւոր ժողով եւ ապա պատարագ ու հոգեհանգիստ. 26-ին—1) մաղթանք, 2) հացկերութիւն—գործին եւ ժողովրդին ազնւականութեան եւ թիֆլիս քաղաքի կողմից, 3) հանգիստաւոր ներկայացուցիչներին 27-ին—1) ժողովրդական տոն կառավարչապետի կողմից եւ 2) երեկոյեան ճաշ ազնւականութեան կողմից հրաւիրվածներին. 28-ին—1) նախաճաշ հրաւիրվածներին քաղաքի կողմից եւ 2) ֆէյերվերկ քաղաքի կողմից։ Բոլոր տոնական օրերում տեղի կունենայ լուսավորութիւն քաղաքի կողմից եւ կը նշանակվեն պատաւաւոր պատգամներ թիֆլիսի եւ Գուրթաիսի նահանգների ազնւականութեան կողմից—10-ական մարդ իւրաքանչիւրից։

Ժողովեան, երկրագործութեան, մեղուաբուծութեան, չերամպականութեան... եւ մի շարք շնորհաւորներ մէջ, որ կարողանայ ժողովրդի մեծած հաւատը վերականգնել ու նրա վրա նոր գործ հիմնել եւ այն ներկայ պայմաններում։

Ինչու գիւղացուն օգնելու գործը բացառապէս գիւղական ուսուցչի վրին փաթաթելի՞ «Փլաւ ուտելը լաւ բան է, մին օր մեր տան, մին օր ձեր տան»... Թէ գիւղացուն օգնելը լաւ բան է, եկէք ամենքս էլ օգնենք։ Բաւական չէ, եթէ գիւղական ուսուցիչը բարեխիղճ կերպով կարողանայ տանել մանուկ սերնդի կրթութիւնը (որ ապագայ գիւղացիներ պիտի լինեն), աշխատի ընթերցասիրութիւն, գրագիտութիւն տարածել ժողովրդի մէջ, պարագայ միջոցներին կարգաւ-գրել սովորեցնել հասակաւոր անգործներին, գիւղերվայ երկար երեկոյեան խալտառակ աշուղական հեքիաթների փոխանակ գոմի օդաներում կարգաւ կամ հէնց իրանց գիւղացիներին կարգաւ տալ կեանքից վերցրած ընտրովի պատմութիւններ, գիտական բրօշխրներ ու բացատրել, հասկացնել եւ այլն եւ այլն Մենք հակառակ չենք նաեւ, որ գիւղական ուսուցիչը խորհուրդներ տայ, խրատել իրան զիմոռներին բժշկական, իրաւաբանական եւ այլ խնդիրներում, բայց միայն այն դէպքում, երբ հաստատ համոզված կը լինի, որ իր տուած խորհուրդը զբաւական հետեւանք կունենայ գիւղացու համար։ Իսկ չը գիտեմք բառը դուրս ձգել բառարանից ու գիւղացու «աչքերը թող փակելով» ամենապէտ ձեւանալ։

Թիֆլիսի գաւառապետը հաղորդեց ցուցահանդէսի վարչութեանը, թէ այդ գաւառում ապրող թուրքերը, պաշանքը եւ խելութները իրանց ինքնուրոյնութեամբ եւ առանձնապատկութիւններով առանձին ազգագրական հետաքրքրութիւն են ներկայացնում, ուստի եւ նա կը կամենար ուղարկել թիֆլիս, ցուցահանդէսի ներկայ լինելու համար, 5—10 հոգի իւրաքանչիւր ցեղի տիպիքական ներկայացուցիչներից։ Գաւառապետը խնդրում է քաղաքահանդէսի վարչութիւնից տեղեկութիւն տալ իրան, թէ կը տրվեն արդեօք ուղարկված մարդկանց ընկալարաններ, երբ նրանք պէտք է գան թիֆլիս եւ ինչպէս ժամանակ պէտք է մնան նրանք թիֆլիսում։

«Новое Обозрение» լրագրին հաղորդում են Պետերբուրգից, թէ թիֆլիսում քաղաքային ընտրութիւններ կատարելու եղանակի հարցը ներկայացված է արդէն մինիստրների կոմիտեին։

Յունիսի 29-ին հրատարակված տեղեկութիւններով՝ կովկասեան հանքային ջրերից օգտվելու համար ժողովվել են պետութեան դանազան մասերից 10,651 հոգի, այն ինչ անցեալ տարի այդ ժամանակվայ ընթացքում հանքային ջրերում հաւաքվել էին 7,717 մարդ, իսկ 1899 թւին—7635 մարդ։

Ներկայ 1901 թւականի ընթացքում, ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերը, զինուորագրութեան հրաւիրվելու են ընդամենը 308,500 հոգի։

Ինչպէս հաղորդում է «Донская Рѣчь» լրագրը, հայկական բարեգործական ընկերութիւնների կանոնադրութիւնների վերաքննութիւնը տեղի կունենայ հոկտեմբերին։

Անկախութիւն մեզ գրում են. «Մեր գաւառի գիւղական բժիշկ եւ վրացի երիտասարդ զորդ պ. Գոմարթիլի, որ ապրում էր Բարաէթի մայր-վրացական գիւղում եւ կառավարում էր տեղական հիւանդանոցը, պաշտօնով տեղափոխվեց թիֆլիս, Միքայէլեան հիւանդանոցը։ Դրանով մեր գաւառը զրկվում է մի լուսավոր եւ համակրելի մարդուց եւ օգտակար բժշկից»։

ՇԱՄԱԿԱՆԻՑ մեզ գրում են. «Յունիսի 30-ին, շաբաթ երեկոյեան, պ. Լալայանի զանիծում կայացաւ պ. Կարա-Մուրզայի առաջին համերգը։ Նա անցաւ այնքան աշուղ եւ ուրախ, որ ժողովուրդը մի տեսակ տոնական ցնծութեան մէջ էր գտնվում հանդէսի ժամանակ։ Բոլոր տոնականները վաճառվել էին եւ զանիծե ծայրէ ծայր լինել էր հետաքրքրվող հասարակութեամբ։ Հանդիսականները ամեն տեսակ ցոյցերով վարձատրում էին յարգելի երաժշտապետին։ Համերգը բաժանված էր երկու մասի—հայոց եւ ռուսաց։ Ներկայ էին շատ պաշտօնեաներ եւ պ. գաւառապետը, որ ինչպէս երաժշտական գործին սիրահար,

եւ գոնէ, իբրեւ գիւղական ուսուցիչ, երբեք թող չէի տալ։

Ինչու գիւղացին բժշկի է դիմում հիւանդի միայն հոգեվարքի ժամանակ։ Որովհետեւ պ. բժիշկն իր մի այնքանութեան համար հիւանդի ամբողջ գինն է պահանջում. դէպք է եղել, երբ 25 վերստ քաղաքից հեռու մի գիւղ գիւղացու ջրհեծ ձիով կամ կառովով գնալու համար բժիշկը 32 ռուբլի է վերցրել։ Այսպէս եւ ուրիշ անդամներ, նայելով թէ խեղճ գիւղացին իր լաց ու ողբով որքան կարողանում է կոտրել պ. բժիկի յամառ «բազարը»։

Ինչ կը լինէր, եթէ մեր գաւառական բժիշկները մի փոքր չափաւորէին իրանց վրիթխարի» վրիթխարներն ու աշխատէին գիւղացու հետ մի փոքր երկար խօսել, ընկերոջ եւ հիւանդի մի անգամ, հէնց զօրանքի համար մի քանի օրով դուրս գալ գիւղերը չըջնուէն եւ հաստատաբաններ ժամանակ, փոխանակ ամեն կերպ թագնելու իրան մահ սպառնացող սոսկ կալի վտանգը, անձամբ կը յայտնէր իշխանութեան ու բժիշկ կը խնդրէր, իսկ ուսուցիչն իր կողմից կը կարողանար գործ ընել իր գիտեցածը մինչեւ բժիկի գալը։ Ինչ կը լինէր, եթէ հարուստ քաղաքների բերեղեայ պալատներ-

շատ գոհ էր պ. Կարա-Մուրզայի ութ օրվայ մէջ պատրաստած խմբի երգերից։ Խումբը բաղկացած էր 82 հոգուց, նրանց մէջ 25-ի չափ տիկիներ եւ օրիորդներ էին մասնակցում։ Աչքի էր ընկնում իր աշուղ սօր երգով տիկին Վարդուհի Աթանէսեանը։ Միւս օրը, լուսին 1-ին, կիրակի օր, նայն երգերը լսելու համար մուտքը ձրի էր եւ բաց առանձնապէս կանանց եւ մանուկների համար։ Հանդէսը վերջանալուց յետոյ պ. Կարա-Մուրզա մի փոքրիկ ճառով գովեց խմբի եռանդը։ Ապա բացատրեց ներկայ եղող հասարակութեան համերգի եւ առհասարակ բեմական գործի կրթութիւնը նշանակութիւնը։ Հանդէսը փակվեց եւ օգնւորված ժողովուրդը ցրվեց։ Պարտք ենք համարում շնորհակալութիւն յայտնել պ. Ա. Լալայեանին, որ աշակցեց գործին՝ զննելով պ. Կարա-Մուրզայի տրամադրութեան տակ իր տունը, որ ամենաշարժաւոր ու մեծն է Շամա-մարում։ Երկրորդ համերգը լինելու է ամսիս 6-ին, ուրբաթ օր»։

ԿԱՐՄԻՑ մեզ գրում են. «Յունիսի երկուսին դերասան պ. Վրոյրը տեղական մի երկուսի քողերի հետ ամառային ժողովարանի դահլիճում խաղաց «Առեւանդութիւն» եւ «Աղաւ ու Եւա»։ Ներկայացուցած ժողովուրդը ցրվեց։ Պարտք ենք կիսատ պատկերակներին յետոյ»։

Անկախութիւն մեզ գրում են. «Հեղեղներից յետոյ հոտենտոտեան մուկը համարեալ ըրորովին անհետացել է, բայց նրա փոխարէն մեծ ջրանակութեամբ հացի բզէլ է երեւացել Բալթայի, Սոսպիայի, Մուրճախէթի, Չանդուրայի եւ այլ գիւղերի դաշտերում։ Ներկայ բզէլը, որ անկասկած 1899 թւի բզէլի սերունդն է, տեղ-տեղ այնքան էլ չէ կարողանում վնասել արտերին, որովհետեւ համեմատվում են, բայց տեղ-տեղ կրկին լուրջ վնասներ է հասցնում»։

ԱՐՏԱԳԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՅԻՐԱՆՍԻՍԻՑ

Պարիզ, յուլիսի 4-ին
Վերջապէս ընկերութեանց վերաբերեալ հռչակաւոր օրէնքը Ֆրանսայի օրէնսդիր երկու ժողովներու կողմէ քուէարկվեցաւ։ «Պաշտօնական լրագրի» զայն երէկ հրատարակեց։ Ուրեմն այլ եւս օրէնքի ուժ ունի ան երէկուրէն սկսած։

Նպատակ՝ այսօր, մեր ընթերցողները այդ օրէնքին զանազան տրամադրութիւններուն հետ ծանօթանալու չէ։ Այդ աշխատութիւնը ուրիշ անգամ Միայն կուզեմ բացատրել այստեղ, թէ ինչ է անոր արժէքը ու ինչ հաւանական հետեւանքներ պիտի ունենայ անիկա, ապագային։

Ին առաջ պէտք է սա կարեւոր նկատողութիւն ընել. այս օրէնքը միմիայն կրօնական միաբանութիւններու համար չիւղած չէ։ Ինչպէս էր անուրեղ ցոյց կուտայ, անիկա կը տաւորածվի ամեն ընկերակցութեանց վրա։

Րում փափրկի բաղձոցները վրա հանողը բիւրաւոր բժիշկները յանձն առնէին իրանց ամբողջ կեանքի ընթացքում, շատ չեմ ասում, 2—3 հատ բժշկական բրօշխրներ հրատարակել ժողովրդին մատչելի լեզուով, մատչելի գնով։ Եւ այդ անհնարին չէ, գիտե՛ք, բժիշկ Արծրունին տարին մի քանիսն է հրատարակում, բժիշկ պ. Բուրդուգեանն արդէն մի շարք հրատարակած ունի... բայց ափսոս ինչքան «մոմով—լուսով» որոնեցի՜ էլ ուրիշ մէկն էլ չը գտայ, որ անունը տայի...

Գիւղացիները խմբերով մաշում են թիֆլիսի «Միքայէլեան» հիւանդանոցի չեմ ու զեղ չը չը գտնելով, շաբաթներով ամիսներով «խաւերի» անկիւններում կուշ գալուց ու գրպանների վերջին կօպէլը ծախելուց յետոյ, յուսալք լուրջ մեր բժիշկները միացած ուժերով կամ հարուստ բարեգործների օժանդակութեամբ նահանգական քաղաքներում չափաւոր վճարով (ձրի չեմ ասում) մի-մի հիւանդանոց պահել գիւղացիների ու աղքատների համար... Բայց ո՞ւմ հոգի է, թող գիւղական ուսուցիչը բժշկութիւն սովորի...։

Գիւղացին դատաւարական գործ ունի, էլ ճարը կտրված վազում է քաղաք փաստաբան վարձելու եւ ընկնում է անբարեխիղճ փաստաբանների սրկիկ գործակալների ճանկը, (որ միշտ փողոցներում չըջնում են որս գտնելու) ու դատարկ գրպանով տուն դառնալուց յետ, գործն էլ տանով տալիս։

Արդ միայն կրօնաւորները չէ, որ կը հաւաքվին համախմբումներ, ընկերութիւններ կազմելու համար։ Քաղաքացիի ամեն դասակարգ այդ իրաւունքն ունի ու զայն կը գործադրէ։

Այս օրէնքը աւելի բացասական, քան դրական նկարագիր մը ունի։ Կրօնական միաբանութիւնները սակայն երբեք իրաւունք չունին անկէ տրտնջալու, քանի որ ան, ինչպէս ըսի, ամեն ընկերակցութեան պիտի կրթարկվին։

Ասկէ դատ, չար լեզուները դիտել կուտան, թէ այդ օրէնքը աւելի ընկերակրական ընկերակցութիւններու դէմ ուղղված է, քան կրօնական։

Կրօնական միաբանութիւնները որքան որ ալ ուզտեր ըլլան, ստեղին ծակէն կանցնին, աւելորդ տեղը չէ, որ անոնք Լոյսլայի աշակերտներ են։ Օրէնքը այս աստուածավախ մարդերուն համար չէ։ Վաղը պիտի տեսնէք, որ անոր երկաթէ տրամադրութիւնները 'այս թանձրափոր ու պարարտ բերքաներուն համար եղէգի մը ձկուկութիւն պիտի ստանան։

Եթէ անիկա միայն կրօնական կարգերուն դէմ ըլլար, պէտք է գործադրվէր առհասարակ բոլոր միաբանութիւններուն վրա։ Այդպէս չէ սակայն։ Արտօնութիւն ստացած կարգերը աւելորդ խոտեր են, որոնք անհրաժեշտ է վաւերացում կրող միաբանութիւններն են, որ պէտք է վախճան անկէ։ Բայց ասկէ դիւրին բան կայ, արտօնութիւն կը ստանան, պիտի ըսէք։ Անտարակոյս, բան մը զոր սկսած են ընել արդէն Հաղի օրէնքը հրատարակված՝ պարսկական վարդէկ-Բուսո անվաւեր կարգերու կողմէ անագին թւով արտօնութեան խնդրանքներ ստացած է։

Ուրեմն այս օրէնքը՝ հակառակ իր հանած մեծածխոր աղմուկին՝ լեռն է, որ մուկը կը ծնի։ Բայց կարելի է նորէն հարցնել, թէ այդ ծնած մուկը ո՞ր է, թէ վրժած։

Եթէ օրինագիծը խորհրդարանին ներկայացվեցաւ, հակակերական վազը պատրաստ կը լինէր կրօնական աղուէսին վրա նետվելու ու զայն բզիկ բզիկ ընկու։ Երկաւ, զայրացած ճառերով, հետաքրքիր ուսուցիչի դարձածներով՝ կրօնական կարգերու վատաւորվ ու վնասակար դերը մէջտեղ հանելէ ետք, ատենադահլիճները այն եղրակացութեան կը յանգէին, թէ միակ ճարը անոնց ձեռքէն խլելն էր իրենց զարհուրելի զէնքը—միլիոնները։ Մասնաւոր որ այդ միլիոններն ու միլիարդները շատ օգտակարապէս գործածելու առիթը ձեռքի տակ էին։ Գործաւորներու հանգստեան անդուրկին յատկացնել Բայց վազը յանկարծ փոխվեցաւ նապաստակի։ Ե՛րբ էք տեսեր, որ նապաստակը աղուէս բզգեց։ Ու Աստուծոյ շնորքը ի՞նչ խորհրդարանին վրա։ Պ. Վարդէկ-Բուսո Սուրբ Հոգիին այցելութիւնը ստացաւ։ Եւ վիճաբանութիւններէն որպէս դուրս եկաւ, որ պէտք չէ երբեք դաչիլ բարեպաշտ մարդերու լուծային։ Գործաւորներու հանգստեան թոշակի Պահ, գործաւորը եթէ հանգստանայ, այլ եւս գործաւոր չըլլար։ Ինչու համար եղել են գործաւոր. աշխատելու համար. չէ։

Եւ յետոյ պ. Լուրէ՛ Պապէն օրհնված համար։

Միթէ մեր փաստաբանները չէին կարող մեծ քաղաքներում մի-մի փաստաբանական բիւրօ հիմնել ու չափաւոր վճարով (դարձեալ ձրի չեմ ասում) խորհուրդներ տալ անձար, տղետ գիւղացուն, նրա գործը պաշտպանել, մատչելի ձեւով, մատչելի գնովով օրէնսգիտական գրքեր տարածել գիւղերում...

Բայց ինչո՞ր են ասում... որ փաստաբանը ժամանակ ունի այդպիսի դատարկ բաներով զբաղվելու... Թող ուրեմն գիւղական ուսուցիչը օրէնք սովորի...

Այսպէս եւ բոլոր միւս մասնագիտութիւնները։

Բայց եթէ մեր դիպլոմաւոր մասնագէտները, փոխանակ լոկ իրանց անձնական վայելքների ու տոբանքի յետեւից ընկնելու, որ մարդկային կեանքի սոսկ անասնական մասն է կազմում, բարեհաճէին իբրեւ մարդ, իբրեւ հասարակութեան անդամ, յանձն առնել իրանց հասարակական պարտքը պարտքը խեղճին, անձարին օգնելու անհրաժեշտութիւնը, մեր կարծիքով երբեք կարիք չէր լինի բոլոր այդ ծանր ու մեծ բեռները գիւղական ուսուցիչ վրին բաժնալ, որ չը պիտի կարողանանար գոնէ այնքան կատարել, որ գէթ սագի չափ էլ կարողանար պարծենալ իր «վաղելով, լողալով, թռչելով»...

Ջաւախցի

րիչ մը ստացաւ Աստուծոյ շնորհքը, Ս. Հոգին ու օրհնված համրիչը.—ասոնք տարակոյս չը կայ, որ միլիոններ կարծեն:

Ու որոշվեցաւ որ կրօնականները տէր ձգեն իրենց հարստութեան:

Հիմա այս ամենուն մէջ զուարճալիս սա է, որ կրօնականները, որոնք պէտք էին այլ եւս առաջնէ մինչեւ իրիկուն աղօթք ու օրհնութիւններ կարգաւ խորհրդարանին, ելեր լալու զիմացութիւններ կանոնն, մարտիրոսի, հալածուողի կիցուածքներ կը փորձեն: Փրանսիայի մէջ մասը գիտէ, թէ—որովհետեւ լրագիրները փողով, թմրուով ծանուցին—կրօնական միաբանութիւններու դէմ օրէնք մը քուէարկվելու վրա էր, քուէարկվեցաւ: Հազաւորեալ են անոնք, որ ուշի ուշով հետեւեցան այդ օրէնքին ողիսականին: Ու քիչեր գիտեն թէ անիկա բոլորովին անսկզ է, թէ պատգամաւորները հիմնադր կատակերգութիւն մը խաղացին անոր չորսը:

Կրօնականները այս դրութիւնն է, որ պիտի չաւազործեն, ու սկսած են շահագործել: Ձէ մի որ «հալածելը, տարածելը» է:

Արեւային ու բարի Գիտելի միշտ բաց ձեռքը, այստեղեւեւ աւելի համարձակութեամբ, աւելի փստաճութեամբ, աւելի յամառութեամբ ժողովուրդը—ոչխարին պիտի երկնայ, ոչ միայն անոր վարանկոտ ու տարտամ հոգին առաջնորդելու մատուցին չի միութիւններուն մէջ, այլ եւ անոր ոսկին քաղցնելու համար մատուցին ետեւ պահված Դանաւայան կարասին մէջ:

Պապը արդէն սկսած է կոկորդիլոսի մը պէս արիւն արցունք թափել: Կրօնական կարգերու մեծաւորներուն յունիսի 29-ին ուղղած նամակի մը մէջ կը յայտարարէ, թէ «չստ վշտահար կը դադար ինքզինքը այն ծանր թշնամանքներուն համար՝ զորքանք մը ազգեր կընեն իրենց դէմ: Եկեղեցին այլ կը տրտնջայ, կաւելցնէ Պետրոս առաքելի փոխանորդը, որովհետեւ ոչ միայն անիկա իր իրաւունքներուն մէջ ուժգնօրէն վերաւորված է, այլ եւ իր գործունէութեան մէջ մեծ վնաս մը կը կրէ: Ան որ» քանաններուն եւ կրօնաւորներուն կը դաշին, եկեղեցիին աչքին բերբերուն կը դաշին:

Ափսոս որ այս առբը մարդուն տրտնջները հիմ չունեն, ափսոս որ այդ թշնամանքները բոլորովին անկարեւոր ու պատածական են Մեր հաճոյքն ու միւրիտարութիւնը պիտի բլլար տեսնել չը մեղած ուր օրը, ուր գիշակիր թուրքի գլուխներով բոլոր անուառքի վաճառականները պիտի անհետանան ու մարդկութիւնը իր ամենէն արիւնաւոր թշնամիներէն ազատված՝ ճշմարտութեան ու Բանականութեան յաղթանակը պիտի աւետէ մոլորին ու չարարանքին մէջ խաբխարող դրժբաղդ ժողովուրդներուն:

Տիգրան

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—Անգլիական լրագիրները մանրամասն տեղեկութիւններ են հաղորդում այն ընդհանուր ժողովի մասին, որ նորեքուս կազմել էին Լոնդոնի Reform-Club-ում համայնքների ժողովի ազատամիտ կուսակցութեան բոլոր անդամները ժողովին ներկայ էին աւելի քան 120 անդամներ, ուրիշն համարեա համայնքների ժողովի բոլոր ազատամիտները: Ընդգրկած գլուխները կուսակցութեան պարագլուխ Կէմպբել-Բաններմանի գլուխը տալիս անոնց աղվալից ծափահարութիւնների եւ բացականչութիւնների: Բաններմանն այդ ժողովում արտասանեց հետեւեալ ճառը. «Դուք բոլորը, ի հարկէ, գիտէք,—ասաց նա,—թէ ինչը ստիպեց ինձ հրաւիրել ձեզ այս ժողովին: Քիչ ժամանակ առաջ տեղի ունեցած անցքերը ցոյց տուին, որ ազատամիտ կուսակցութեան մէջ կան լուրջ տարաձայնութիւններ, որոնք թող չեն տալիս նրան միաբան գործելու, իսկ իմ գլխաւոր պարտաւորութիւնս եւ զիստորդանկութիւնս, որպէս կուսակցութեան պարագլուխ, այն է, որ պահպանվի կուսակցութեան միութիւնը, առանց որի նա չէ կարող ունենալ իրան վայել կարեւոր դիրքը պետութեան մէջ: Ի նկատ առնելով այս հանգամանքը, ինձ անհրաժեշտ է հաւատարմաց, թէ արդեօք կուսակցութիւնը տաժու է այժմ դէպի ինձ այն հաւատը, որ ունէր նա առաջ: Մեր տարաձայնութիւնները վերաբերում են հաւաքաւորութեան պատերազմի հարցին: Բայց նրանց չափազանցացնում են: Ամենախիստ կտերուս կուսակցութեան չորս հինգերորդական մասը կազմող անդամները համաձայն են այն բանում, որ պէտք է ոչ մի քանք չը ինչպիսի պատերազմը ամենաառաջ եւ յաղթական վախճանի հասցնելու համար, բայց, միւս կողմից, պէտք է մի ձեռքում սուր բռնելով, բռնել միւսում նաեւ ձիթելու ձիւղ եւ բացայայտ կերպով սակայն պայմանները, որոնցով մենք պարտաւոր ենք խաղաղութիւն կնքելու: Մենք ասում են այժմ, թէ բռնելները չափազանց

յամառ են, թէ նրանք լսել անգամ չեն ուզում ոչ մի պայմանի մասին, բացի անկարելի պայմաններից: Այստեղից հանգամանք չը պէտք է արգելէ մեզ յայտնելու մեր մեծահոգի եւ ներողամիտ դիտաւորութիւնները ապագայի վերաբերմամբ: Այս կերպով մենք աւելի շուտ կը խորտակենք յամառութիւնը, քան սպանալիքներով: Մրա հետ միասին անհրաժեշտ է, թէ քաղաքական եւ թէ բարոյական տնտեսից, խուսափել խիստ միջոցներից, որոնք կարող են միայն աւելի եւս բորբոքել քաղաքական եւ ցեղական թշնամութիւնը, որ տիրում է այժմ հարաւային Աֆրիկայում: Մեծահոգի լինեք եւ ներուճն հրատարակեք այն բոլոր բրիտանական հպատակներին, որոնք զէնք են բարձրացրել մեր դէմ, եւ վերջապէս, պիտե՛ք այն բանի վրա, որ հարաւային Աֆրիկայում մտցնվի, որքան կարելի է, կարճ միջոցից յետոյ, գաղթականական վարչութեան մեզ այնքան ծանօթ, ազատ եւ անկախ ինքնավարութիւնը, որ պէտք է,—եթէ այդ բանը կը կամենան բոլոր հարաւ-աֆրիկական գաղթականութիւնները,—առաջնորդէ նրանց դէպի ֆեդերացիա: Ահա արանք են այն ընդհանուր հիմունքները, որոնց վերաբերմամբ, եւ կարծում եմ, բոլորն համաձայն են: Տարաձայնութիւնները վերաբերում են միայն մանրամասնութիւններին: Բայց եթէ այդպէս է, ինչու մենք չենք կարողանում միաբան գործել: Պէտք է ուղղակի ասեմ, որ երկպառակութիւնների պատճառով ոչ թէ միջոցները վերաբերեալ հարցերն են, այլ անհնական հակառակութիւնները, որոնք վերջին վեց տարվայ ընթացքում եղել են ազատամիտ կուսակցութեան համար թուրքութեան ժշտական աղբիւր: Զանազան քաղաքական հարցերի մասին տարբեր կարծիքներ ունենալը թոյլատրելի եւ կոտարելի պէս օրինաւոր բան է, բայց առանձին անձերի ինտրիգները, որոնք աշխատում են ուրիշ գոյն տալ այդ տարբեր կարծիքներին, չափազանցանել նրանց, չը պէտք է թոյլատրել իրեն: Կուսակցութիւնը չը պէտք է բաժանվի խմբերի եւ մի խումբ չը պէտք է գործէ միւսի դէմ: Ահա թէ ինչ էի ուզում ասել ես ձեզ այսօր: Այս ճառից յետոյ ժողովը միաձայն ընդունեց հետեւեալ որոշումը.—համայնքների ժողովի ազատամիտները ցանկանում են յայտնել Հենրի Կէմպբել-Բաններմանին արտագին շնորհակալութիւն այն ծառայութիւնների համար, որ նա մատուցել է կուսակցութեան եւ ազատամիտ սկզբունքներին պայքարելիս: Ու երկրի մէջ, նոյնպէս եւ իրանց անփոփոխ եւ անկեղծ վստահութիւնը նրան, որպէս կուսակցութեան պարագլուխ:

—Լրագիրների ասելով, ապտամբութիւնը Արաբիայում օր ըստ օրէ աւելի եւ աւելի ընդարձակ ծաւալ է ստանում: Եէջի Էսադը—Համիր-Էլ-Գիւն-է-Ֆէյսին 35,000 լաւ վարժված զինուորներ ունի իր ձեռքի տակ: Արաբները չէլիս Էսադին համարում են մարգարէի անմիջական սերունդ: Ձէնք եւ ուղղամիտները նրանց հայթայթում են անգլիացիները: Քիչ ժամանակ առաջ սուլթանը հարկադրաբար խնդրեց անգլիական զեւապն Օ' Կոնսօրին միջոցներ ձեռք առնել զաղաղացիները զէնքի վաճառումը «գահի թշնամիներին», իսկ սէր Օ' Կոնսօր պատասխանեց, թէ անգլիական կառավարութիւնը չէ կարող արգելել մասնաւոր անձերին զէնք ծախել:

—C. П. Бѣд., լրագիրը, քաղցրով երիտաւարը թիւրքերի օրգաններից, հաղորդում է, թէ սուլթանը արժանատիով սպանել է իր աւագ-բժիշկ Եէջի-Բէյին, կասկածելով, թէ նա կամենում է թուլանալ փաղաքական իսկ երբ գաղափր օստիկանութեան կառավարիչ Մահմադ-Ջալալ-Էլ-Գիւն փաշան հաւատարմութիւններ, թէ սպանվածը նա ամենահաւատարմ հպատակներից էր, աւելիանց լազեղաւ եւ նշանակեց սպանվածի ընտանիքին չափազանց մեծ կենսաթոշակ:

—Կ. Պոլսից գրում են արտասահմանյան լրագիրներին, թէ սուլթանը ստորագրեց մի իրարէ, որով հրամայվում է 500,000 ֆրանկ տալ ֆրանսիական կառավարութեանը, որպէս վարձատրութիւն ֆրանսիական քաղաքացիներին՝ հայկական կոտորածի ժամանակ կրած վնասների փոխարէն:

—Գնեւրայ Բիտտիկ Բէյինհայից հեռագրում է «Новое Вѣд.»-ին, որ անհիմն է այն լուրը, որ իբր թէ իրան աքսորել են Պրազայից (բարձրների տնայնաւորութեան ժամանակ):

ՄՇԱԿԻ ՀԵՈՒՊԻՐՆԵՐ

ԻՌԻՍԱՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆՑ

3 յուլիսի

Բէյլէ, Երեկ ցերեկով Նորին Բարձրութիւն Թաղաժառանգը ներկայ էր Թոնաթաժաժուութեանը «Память Азова» եւ «Воевода» նաւերի վրա: Երեկոյան Նորին Բարձրութիւնը նայեց ուսուցանալ-թողաթնային զորաբաժնի նաւերը: Նորին Բարձրութեան ներկայութեամբ կատարվեցին զինուորական վարժութիւններ: Այսօր առաւօտեան Նորին Բարձրութիւնը նայեց ծովային կառնետների կորպուսի զորամասի նաւերը, որոնց վրա նոյնպէս կատարվեցին

զինուորական վարժութիւններ: Ժամի 11-ին «Мининъ» չրջանաւի վրա, զորաբաժնի կառավարչի մօտ, տեղի ունեցաւ նախաճաշ, որ արժանապաւ Նորին Բարձրութեան ներկայութեան:

ԿԱԶԱՆ: Այսօր այստեղ հասաւ մամուլի գործերի զիստոր վարչութեան կառավարիչ Իլյան Շափուկոյ:

ԻՅԱՆՆԵՒՍԻՈՒԴ: Քաղաքի չրջակայքում բռնկեցին վերջին ժամանակ մեծ գործունէութիւն են ցոյց տալիս: Յունիսի 19-ին նրանք նորից երեւացին Բողէսպօրտի մօտ, բայց տեսնելով, որ առաջաւոր պահանակները արթուն հակում են, նորից անյայտացան:

ՊՐԵՏՈՐԻԱ: Այստեղ հասան Օրանսեան հանրապետութեան կառավարութեան այն անդամները, որոնք Բէյցում գերի էին առնված:

ԼՕՆԴՕՆ: «Times»-ին հաղորդում են Սէուլից յունիսի 27-ից, թէ համարեա բոլոր վիճելի կէտերը, որոնք վերջին ժամանակ ուշադրութիւն էին գրաւում, այժմ լուծված են: Իրերի գրութիւնը նորից սովորական կերպարանք ընդունեց: Եւրոպացիները զգուշութեամբ եւ անչեղ հետեւում են Ռուսաստանի մեծ շարժմանը կօրէյական սահմանի վրա: Կօրէյայում ապրող եւսպոնցիները թիւը անընդհատ աճում է: Մասնավոր հարցը դեռ եւս չէ լուծված: Եւսպոնիս ստացել է այնտեղ, դաշնադրված նաւահանգստի սահմաններում, մի կօնցեսիա, ռուսական կօնցեսիայի չափով եւ, ռուսականի նման, ձկնորսութեան իրաւունքով ծովային երկարութեամբ: Ամեն մի առանձնաշնորհ, որ պահանջում է Ռուսաստանը, հաւատարմաւորվում է համապատասխան առանձնաշնորհներով, որ ձեռք է բերել Եւսպոնիս: Փրանսիան եւսպոնցի գործունէութիւն է ցոյց տալիս: Նրա նաւերը յաճախ երեւում են Կօրէյայի ափերի մօտ: Անգլո-ֆրանսիական փոխառութեան մասին, որի վերաբերմամբ տեղի ունեցած բանակցութիւնները ապրիլի 3-ին վերջացած են իւնիսնի սինդիկատի միջոցով, այստեղ ոչինչ չէ լուծված:

ԼՕՆԴՕՆ: «Daily Mail»-ին հեռագրում են Տօկիոյից յուլիսի 2-ից, թէ, այնտեղի դիպլոմատիական չրջանների կարծիքով, անցքերը զրոյում են Եւսպոնիային ընկնել Ռուսաստանի գերիւր: Մի ակնաւոր պետական անձ հաւատացնում էր «Daily Mail»-ի թղթակցին, թէ շատ կարելի է, որ առաջիկայ վեց ամսվայ ընթացքում կապի ռուս-եւսպոնական դաշնակցութիւնը Եւսպոնիս խիստ վտանգած է այն չնչին աջակցութիւնից, որ իր գործառնութիւնների մէջ հեռաւոր Արեւելքում գտնում է պետութիւնների կողմից, ի թիւս որոց եւ Ռուսաստանի ու Անգլիայի կողմից: չը նայելով սրան՝ նա այստեղեւեւ եւս կը հետեւի բոլորովին խաղաղ եւ հաշտեցուցիչ քաղաքականութեան:

ԲՈՒԽԱՐԷՍ: Առաւօտեան ժամի 10-ին Մեծ-Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ Կիւստնիշիւմ փոխաւ. նաւամատուցի վրա նրան զիմաւորների թագաժառանգը, մինիստր-նախագահ Սարգիզա, ռուսական զեւապն Ֆոնտոն, զիվիդիայի զիստաւոր, ռուսականագետ եւ քաղաքագետ: Մեծ-Իշխանին զիմաւորների ռուսական օրհներգի հնչիւններով: Նորին Բարձրութիւնը եւ իշխան Ֆեդրիկանդ զօրահանդէս կատարեցին եղբիւների երկրորդ բաւալիոնին, հէյց այն բաւալիոնին, որ առանձին քաղվածքներից ցոյց տուեց Գրիվիցան առնելիս: Բաւալիոնը անցկացաւ Նոցա Բարձրութիւնների առաջից: Մեծ-Իշխանը զինուորական պատիւ տուեց բաւալիոնի գրօշակին, զրանով ողջունելով ռուսական զօրքը: Ապա Մեծ-Իշխանը, ռուսական զահաժառանգը եւ նրանց ուղեկցող անձինք անցան Կիւստնիշիւի փողոցներով, որոնք փառաւորապէս զարդարված էին զրօշակներով, ծաղիկներով, կանաչով եւ գորգերով: Նրանք այցելեցին հետեւակ զօրքի եւ թնդանօթածիգների զօրանոցները: Ահաբիւն ամբողջ շարիշար կանգնած էր փողոցներում եւ ողջունում էր Նոցա Բարձրութիւններին: Ռուսական պրինցը այնտեղեւեւ վերադարձաւ դէպի «Regel Karol» նաւը, իսկ Մեծ-Իշխանը դէպի «Ростиславъ» նաւը:

Ռուսական զեւապն Ֆոնտոն հիւրանոցում նախաճաշ տուեց, որին ներկայ էին Մեծ-Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ, մինիստր-նախագահ Սարգիզա, ռուսական զիստաւոր հիւպատոս Լադիսլասկի, պրէֆէկտը եւ ռուսիական ու ռուսական օֆիցէրները: Այսօր երեւոյեան տեղի կունենայ հանդիսաւոր ճաշկերպ զահանակի նաւի վրա ի պատիւ ռուսիական պրինցի, եւ ապա պարահանդէս ու

ընթրիք քաղաքային կլուբում:

ԲՈՒԽԱՐԷՍ: Երեկ Երեկոյան «Regel Karol» նաւի վրա տեղի ունեցաւ հանդիսաւոր ճաշկերպ, որին ներկայ էին մինիստր-նախագահ Սարգիզա, ռուսական զեւապն Ֆոնտոն, զիստաւոր հիւպատոս Լադիսլասկի, անգլիական ստացիոնէրի նաւագետը, զենեարանք եւ բարձրաստիճան անձինք: Գահաժառանգ Ֆեդրիկանդ բաւակ առաջարկեց ռուսաց Կայսերական Չոյգի կենացը, Մեծ Իշխան Ալէքսանդր Միխայլովիչ— ռուսական արքայական Չոյգի կենացը, որի ժամանակ ցաւ յայտնեց, որ Իրան անհնար է անձամբ ողջունել նրանց: Երաժշտութիւնը փոխ առ փոխ նուագում էր ռուսական եւ ռուսիական օրհներգերը: Մեծ Իշխանը ապա բաւակ առաջարկեց ռուսական գահի ժառանգի, ռուսական զօրքի եւ նաւատորմի կենացը, թագաժառանգ Իլյանը—Մեծ Իշխանական Չոյգի, ռուսական զօրքի եւ նաւատորմի կենացը: Զառեք չափազանց սքրտազին ռուսաւորութիւն էին կրում: Երեկոյան 11 ժամին Մեծ Իշխանը վերադարձաւ դէպի «Ростиславъ» նաւը: Քաղաքը եւ նաւահանգիստը հիւսնայի կերպով լուսավորված էին:

ՏԵԼԵԳՐԱԿ: Հրամանը, որով պատուիրվում էր հեծեալների 3-րդ գնդին ճանապարհ ընկնել, փոխված է: Այստեղ մնացող անգլիական զօրքի թիւը աւելացրած է եւ հասցրած 1000-ի:

ՕՐԱՆ: Մակա Բէթի, կազինօ գնալիս, ծորժակին դանակի հարուած ստացաւ. հարուած տուողը անմիջապէս ձերբակալվեց: Այդ յարձակման պատճառով տեղի ունեցաւ կռիւ, որ վերջացաւ մօտ 30 մարդու ձերբակալութեամբ: Զերբակալվածների թուումն է եւ Լուի Բէթի:

4 յուլիսի

ՊԵՏԵՐԲՈՒԴ: Հրատարակված է Բարձրագոյն հրաման, որով արգելվում է պատրաստել եւ արտատաւանդել ներմուծել ու առեւտրի առարկայ դարձնել արժէքաւոր պետական նշաններ նկարով:

Գիտութիւնների ակադեմիայի նախագահ Մեծ-Իշխան Կոնստանտին Կոնստանտինովիչ անունով չափերիզէնեան արշաւանքի զիստոր կարգադրիչը՝ Շպիցերգէնից Տրոմեյում հեռագիր է ստացված հետեւեալ բովանդակութեամբ. «Ամեն ինչ բարեյալով է: Աշխատանքները աղոյ են գնում: Կիւմը վերջացրել ենք: Եւս կայ վերջացնելու ձեռնարկութիւնը: Բակլունդը այսօր ուղեւորվում է Պետերբուրգ:

ՏՈՒՂԱ: Այս օրպէս վերադարձաւ Եւսպոնայ Պրեանայից: Կօմ Տօլստօյ, աղի լողարաններ ընդունելիս, չը նայելով բժիշկների արգելքին, խոնաւ եղանակով ձիով ման է եկել ու մրսել: Դողբողքը առաջին անգամ զգացել է յունիսի 27-ին, երկուրեւան, իսկ հետեւեալ օրը հիւանդութիւնը սաստկացել է: 29-ին տըր կարողութիւնը թիթեւացել է, թէ եւ առանց ուրիշ օգնութեան չէր կարողանում ման դալ: 30-ին առանձնապէս վատ էր զգում իրան,—ոյծերը սաստիկ թուլացել էին, երակազարկը 150 էր: Մինչեւ յուլիսի 3-ի գիշերը հիւանդի դրութիւնը սաստիկ վատագւոր էր: Յուլիսի 4-ի գիշերվայ հիւանդի ընդը կազուրեց հիւանդին եւ կոմսը այսօր լաւ է զգում իրան: Զը նայելով հիւանդութեանը նա շարունակ մը տաժում ու խօսում է իր գրական աշխատանքների մասին: Կօմին բժշկում է Կալուզայից հրաւրված բժիշկ Դուրեւսկի, որ գտել է հիւանդին բարոյապէս չափազանց յոգնած: Հիւանդին չրջապատում է ամբողջ ընտանիքը:

Կ. ՊՈԼԻՍ: Այսօր տեղի ունեցան Ղալաթիայում ժամաւախտից հիւանդանալու էլի երկու դէպքեր:

ԼՕՆԴՕՆ: Պաշտօնապէս: Այն պատերազմում, որ տեղի ունեցաւ յուլիսի 1-ին 24 մղոն Ալիվալպօրտից հեռու, անգլիացիներից ընկան եօթ զինուոր եւ երեք օֆիցէր, վերաւորված են 17 հոգի:

ԲԻՒԻՍՍԷԼ: Պատգամաւորների ժողովը ընդունեց Կոնգրէսի վերաբերեալ օրինագիծը:

ԲԵՐԼԻՆ: Լրագրական տեղեկութիւններով մաքսային նոր տարիքի մէջ մտադրութիւն կայ հաճարի վրա դնել 6, ցորենի վրա՝ 6 1/2, իսկ վարսակի վրա՝ 6 մարկ: Մաքսային դաշնադրութիւններ կապելիս մտադրութիւն կայ չիշնել 5 մարկից ցած հաճարի համար, 5 1/2-ից ցած՝ ցորենի համար, 3-ից ցած՝ գարու համար եւ 5-ից ցած՝ վարսակի համար: Բացի դրանից՝ բարձրացրած են մաքսերը եղբերի եւ կովերի համար, 9-ից մինչեւ 25 մարկ իւրաքանչիւր գլուխ անասունից, ջանել անասունների համար—5-ից մինչեւ 15 եւ խոզերի համար—5-ից մինչեւ 10 մարկ: Սա-

գերը, որոնք մինչև հիմա ազատ էին մաքսից, այժմ ենթարկվում են 70 պֆենիգ մարկի միջև եւ ճարպը ենթարկվում են 30—35 պֆենիգ մաքսի կրկնակի ցնանքից, ձուերի համար՝ 2-ից մինչև 6 մարկ:

10հոկտեմբերի Լորդ Բոլդերի գրում է ազատամիտ կուրբի Սիտիում, թէ ազատամիտ կուրբացուելուն միայն այն ժամանակ կարող է այժմ դառնալ, երբ ուշադրութիւն կը դարձնէ իմպերիալիստական հարցերի վրա, որոնք ամփոփվելին պատերազմի մէջ: Ազատամիտների վարմունքը եւ նրանց չէզոքութիւնը ազատամիտական անգործութիւն են ներկայացնում միայն Բանը մի այնպիսի հարցի մասին է, որ վերաբերում է ամբողջ մարդկութեան. կուրբացուելու եւ քաղաքական անսակեղծի նա մի կենսական հարց է Անգլիայի համար:

ՏՐՕՄՍԷ: Երեկոյան 10 ժամին Բոլդերի արշաւախմբի նաւը ճանապարհ ընկաւ ամերիկական—նորվեգիական զբոյակի տակ եւ գնաց հիւսիսային ուղղութեամբ: Բազմաթիւ նաւեր, դարձարկած զբոյակներով, ուղեկցում էին արշաւախմբին, որպէս զի վերջին անգամ հրաժեշտ տան նրան: Բոլդերի հիւսիսային տրամադրութեան մէջ է: Արշաւախմբը նախ կուգիւորվի Գոնիսկաւար, ուր նրան կը միանայ ամերիկացի Լոնգ. այնուհետք «Պրիտտօֆ» նաւը կը գնայ ուղղակի դէպի Պրանց-Յովսէփի երկրից Բրիտանական ջրանցքով կամ Տէվէտօֆ հրտանգանից այնքան հեռու դէպի հիւսիս, որքան միայն հնարաւոր կը լինի, իսկ «Ամերիկա» նաւը կը վերադառնայ Պրանց-Յովսէփի երկրից Արխանգելսկի վրայով դէպի Վարդէ:

ՄԱԴԻԿԻ: Ինչպէս հետադրում են Սարգոսայից, կաթօլիկները եւ ազատամիտները մէջ չափազանց լուրջ ընդհարումն տեղի ունեցաւ: Ասում են, թէ մօտ 50 մարդ են վիրաւորված: Ամբողջ քարկոծից «Noticiero» լրագրի խմբագրատան գրասենեակը, մօտ նրա մէջ եւ խմբագրութեան մեծ վանաներ հասցրեց. խմբագիրը վիրաւորված է: Կաթօլիկները կադմեցին մի թափօր, որի ժամանակ նրանք սպառազինված էին դանակներով եւ տորձանակներով: Իշխանութիւնները սահմանափակվելին համոզվելով ու պաշտպանելով այն մարդկանց ու նրանց գոյքերը, որոնց վտանգ էր սպառնում:

Պեկին: Երեք ամերիկացիներ, որոնք աւառութեամբ էին պարագում մի գիւղում Պէկինի մօտ, ձերբակալվելին չինացիների ձեռքով եւ հարցուփորձի ենթարկվելին Տեանձինի ամերիկական հիւպատոսից: Յանցաւոր ճանաչվելով՝ նրանք զատապարտվելին 4 տարվայ բանտարկութեան:

Խմբագիր՝ ԱԼԷԿՍԱՆԴՐ ՔԱԼԱՆՔԱՐ

Հրատարակիչներ՝ ԹԱԳՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ
ԻՍԱՀԱԿ ՄԷԼԻՔ-ԱՂԱՄԱԼԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԽՈՐ ՀԻՒՆԴԱՆՈՑ

Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ

(Կուրիա, Վորոնջովի արձանի հանդէպ)

ԱՄԵՐԻԿԱՅԻ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԻԳ:

ԱՌԱՌՈՑՆԵՐԸ

Բ. Ա. Նաւասարդեան—11—12 ժ. վիրաւորութեան, վնասական (սֆիլիս) եւ միզառն. հիւանդ. և Ս. Պ. Չիկովսկի—9—10 ժ. աչքի, ներքին և նեարդալիս:

Լ. Բ. Գրիվիլ—12—1 ժ. ակունքի, թթի և կուրզի:

Չ. Բ. Բարանսեան—11—12 ժ. կանանց և երեխայից հիւանդ.

Ա. Պ. Կարապետեան—1—1/2 ժ. ներքին և երեխայից:

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Ն. Ն. Ռոստոմբեկով—6—7 ժ. վիրաւորութեան և մարմնի:

Լ. Բ. Գրիվիլ—7—8 ժ. ակունքի, թթի և կուրզի:

Բ. Ա. Նաւասարդեան—7/8—8 ժ.

Վնաս 50 կ. չարաքերի ձրի համախորհրդի (կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Օ. Տ. Ասլանբեկով—տանը, ծաղկահատ և բժշկական մարմնամարդ. դիմել 11—1 ժ.:

Հիւանդանոցի վերատեսուչ՝

Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ

ԱՏԱՄՆԱՐՈՅԺ

Օր. Շ. Տէր-ՆԻԿՈՂԱՅՈՍԵԱՆ

Ընդունում է հիւանդներին ամենայն օր՝

Առաւօտան 9—3 ժ.

Երեկոյան 5—7 ժ.

Հասցէ՝ Սուրբ-Նշան եկեղեցու դաթում:

8—8

ԳՈՒՏՏԵՆԲԵՐԳ

գրականութեամբ վաճառվում են հետեւեալ դասագրքերը:

Տէր-Ղեւոնդեան «Մայրենի լեզու» Ա. տարի 35 կ., Բ. տարի 40 կ., Գ. տարի 50 կ., Դ. տարի 60 կ.:

Գէորգեզեան—«Ժողովածու թուրքական խնդիրների» 40 կ.:

Երզնկեան—«Թուրքական խնդիրների», տարրական դասընթացը 35 կ.:

Աղայեան—«Մայրենի լեզու» Ա. տարի 25 կ., Բ. տարի 30 կ., Գ. տարի 55 կ.:

Սահակեան—«Դասատար կրօնի» Ա. տարի 20 կ., Բ. տարի 20 կ., Գ. տարի 30 կ., Դ. տարի 40 կ.: «Արքայան պատմութիւնը նոր ուխտի», Աւետարան, Ե. տարի 40 կ.: «Արքայան պատմութիւնը նոր ուխտի», Գործը առաջնից Ե. տարի 40 կ.: «Դասագիրք կրօնի» հին ուխտի, հատոր Ա, 1 ր. 75 կ., հատոր Բ., նոր ուխտի 2 ր. 5 կ. եւ միւս դասագրքերը:

Տէր-Գարրիէլեան—«Քրիստոնէական վարդապետութիւնը Հայաստանից առաջնական ս. եկեղեցւոյ» 25 կ.: «Յիսուս Քրիստոսի կեանքը» 2 ր. 50 կ.: «Սորբորդութիւնների շարունակական շարադրանքի եւ մանկան» 1 ր.: «Տարրական ֆիզիկա» 60 կ.: «Երկրաչափութիւն» 1 ր. 20 կ.:

Կուսիկեան եւ Սարգսեան—«Մայրենի խօսք» 70 կ.:

Կոստանեան—«Ծաղկաբաղ» 35 կ.:

Գարուսիէլեան—«Տրամաբանութիւն» 1 րուրի:

Աղայեան—«Կարգ աստուածապաշտութեան» 50 կ.:

Վոլպերթ.—«Русская рѣчь», I ч. 20 է., II ч. 30 է., III ч. 50 է.,

Ушанский.—«Родное слово» годъ I 30 է., II 35 է., III 40 է.,

Верещагин.—«Сборникъ Арифметическихъ задачъ» 80 է.

Եւ այլ ամեն տեսակ դասագրքեր: Գումարով

գնողներին զիջում կը լինի: 1—2

ԿԱՐԱ-ՄՈՒՐՁԱՆ

Հրաւիրում է խմբի անդամներին, տիկիներին, օրորդներին եւ պարոններին շնորհ բերել իր մօտ երեքշաբթի, յուրիս 10-ին, երեկոյան ժամը 6-ին, առաջիկայ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԳՈՒՆԿԱՆ ԴԵՄԻՔԵՐԻ 1-ից մինչև նոյնքերի 1-ը երեւոն համերգ երգելու համար խումբ եւ ծրագիր կազմելու: Ընդունվում են նոր անձինք եւս: Тифлисъ, Мухранская улица, д. Мухранского. 2—3



ՆՈՐ ՄԻՋՈՑ

մազերը բուսցնելու եւ ամրացնելու համար, ոչնչացնում է թեփր: Դուրս է եկել նաեւ բոլորովին նոր միջոց

ՁՈՒԻ ԿԱԹԸ

երեսին քնշելով եւ սպիտակութիւն տալու համար, ոչնչացնում է արեւի պատճառած սեւութիւնը, մուկները, տալիս է կաշուին քնշելութիւն եւ սպիտակութիւն: Այդ գները չափաւոր են. մեծ արունքը, արկղի մէջ, 2 րուրի, փոքրը—1 ր. 50 կ. Մալվով են բոլոր պարֆումերական և զեղալվանական խանութներում: Գլխաւոր պահուէլը գտնվում է Պետերբուրգում, Պուշկինայա փողոց տ. № 15, քնակարան № 12. պահուէլի բաժանմունքները գտնվում են. Թիֆլիսում կովկասեան դեղատան ապրանքների վաճառման ընկերութեան խանութում: Երեւանեան հրապարակ եւ նրա բաժանմունքում, Միջայլեան փողոց եւ Բաղուս. նաեւ Միջայլեան կամուրջի վրա, Կապովի եւ Արիստակովի դեղատներում: Օտարաքաղաքացիների պատուէրները կատարվում են անմիջապէս՝ պատուով: 86—100

Լոյս տեսաւ

Ա. Լալայեանի

Ա. Լ. Բ. Օ. Մ.

Կարո քաղաքի եւ նրա շրջանի տեսարանների (Կարս, Սարիզամիշ, Արդահան, Խնձկոնք, Մաղասու բերդ, Անի, Բագնար, Հոռոմոս, Զրիվու. ընդամենը 32 նկար):

Գինն է 1 ր. 50 կ. ճանապարհածախով:

Դիմել՝ Ա. Ալալայու. Կարթ. 10—10

ՇԻՐԱՆԱԶԱԴԻ

ՆԱՄՈՒՍ

վէպի հրատարակութիւնը, հեղինակի թիֆլիսից բացակայութեան պատճառով, էլի քիչ կուշանայ: Բաժանորդագրութիւնը շարունակվում է: Բաժանորդագրին է 1 րուրի: 2—6

ԱԽՎԵՐԴԵԱՆ ԳԵՌԳԻ

ՍԱՅԵԱԹ-ՆՈՎԱՅ

աշխատասիրութիւնը, 172 էրես

Գինն է 50 40Գ.

Մալվով է թիֆլիսի կենտրոնական գրա-վաճառանոցում: 3—10

Մամուլի տակից դուրս եկաւ

(8-րդ տպագրութեամբ) իմ կազմած

ԴԱՍԱՏԵՏՐ ԿՐՈՆԻ

Ա. տարի

Հաւանութիւն գտած (одобрено) Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձութեան կողմից

Մինչև յուրիս վերջը մամուլի տակից դուրս կը գայ

ՄՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ՀԻՆ ՈՒԽՏԻ

Թարմարեցրած պետական դպրոցների հա- (Ե. հ. չ.) մար: 3—5

Հազարեան ձեռարանից Արեւելեան լեզուաց

ՍԱՐԳԻՍ ԱՐԳԻՍՏԿՈՊՈՍ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆՑԻ ԴԱՄԱՍԿԻՅԻ ՀԱՇԻԸ 1900 ԱՄԻ

Մ Ո Ւ Տ Ք	Օ/աբեր թղթ.	Առձեռն գրամ.
Մնում էր առ 1-ին յունվարի 1900 թ.	78,050	835 ր. 91 կ.
1900 ամի ընթացքում ստացել է . . .	3,200	2,138 » 5 »
Ծ Ա Ն Ք		81,250
Վճարված է գնված օ/աբեր թղթերի գին 3,146 ր. 11 կ. եւ 1898 եւ 1899 թ.թ. զրամագրի հաշիւները տպագրելու համար 37 ր. 20 կ., ընդամենը		3,183 31
Առ 1-ին յունվարի 1901 թ. առձեռն պատրաստ կայ...		81,250 ր.
Ծ ա ն օ թ ո թ լ ւ Ն. Դրամագրութիւնը գտնվում է Մոսկովայի նահանգական գան- ձարանում եւ պիտի աճէ, 1883 թուից սկսած, 125 տարվան ընթացքում, մինչև 12 միլիոն գումարը, այնուհետեւ պիտի գործադրվի նուրբատուի անունով դպրոց- ներ հիմնելու եւ թօշակաւորներ պահելու համար: (Ե. հ. չ.)		3—3

ԱՌԵԻՏՐԵԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ջ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր

ՏԱՍՆԻՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Առեւտրական Կուրսերի նպատակն է՝ մասնագիտական առեւտրական կրթութիւն տա- երկու սեռի անձանց և պատրաստել գործնական ճանապարհով հաստ հաշուապահներ: Աւարտողները ստանում են առ տ ե ս ս տ ա տ ն եր: Աւանդելի առարկայք սրանք են՝ 1) Առեւտրական Տնտեսութիւն, 2) Առեւտրական Թուրքանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկային), 4) Թուրքանութիւն համարի վրա, 5) Առեւտրական թղթակցութիւն, 6) Առեւտրական և մուրհակ կա- նոնագրութիւն և 7) Գեղագրութիւն, վատ ձեռք ուղղելը: Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից: Ընդունելութիւնը սեպտեմբերի 1-ից, ա- մենայն օր, առաւօտան 10-ից մինչև 11-ը, և երեկոյան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնակարանում, Սոյուզում, Ալեքսանդր Փրիշնովի տանը № 9, Սերգեյեւկայա և Լեբոնտովկայա փողոցների անկիւնում: Մրադիրը և կանոնները կարելի է ստանալ ձրի ապէս եղբ. Մովսիսովների բանկային գրասենեակում և կուրսեր հիմնողի բնակա- րանում: Օտարաքաղաքացիք դիմում են Թիֆլիս, Ս. Ս. Մանուշկանու. (Ե. չ.) 8—25

„Վ Տ Ա Կ“

ԺՈՂՈՎԱԾՈՒԻ ԽՄԱԳՐՈՒԹԻՒՆԸ

յայտարարում է իր բոլոր բաժանորդներին հետեւեալը. Ժողովածուն մամուլի տակից լոյս է տեսել, սակայն, օրինակաւ որոշ ձեւակա- նութեան պատճառով, բաժանորդներին կուղարկվի կամ ծախու կը հանվի միմիայն յուրիս ամսվայ վերջերին: Մինչև յուրիս 10-ը բոլոր գործակալները պարտաւոր են խմբագրին հասցնել բաժա- նորդագները եւ բաժանորդների ցանկը, այլապէս, այդ օրից յետոյ եկած բաժանորդները կը վճարեն 1 ր. 50 կ. եւ 2 ր.: Ժողովածուն ունենալ ցանկացողները այսուհետեւ պիտի դիմեն «Տարագի» խմբագրութեան մէջ, պ. Արշակ Մեհրաբեանին: 2—3

BATEAUX A VAPEUR FRANÇAIS N. PAQUET ET C-ie

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՒԱԳԱՅՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

կանոնաւոր եւ ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու- չաբաթը մի անգամ:

Եւ հակառակ՝ Բաթումից Մարսել, մասնով Տրապիզոն, Սամսոն եւ Պոլիս: Մեկնում է Բաթումից՝ չորեքշաբթի 4/17 յուրիս չոգնում: Մի ԿԱՍԻ, նաւագնաց ԳԱՐԻԲԻ, Եւ այսպէս չարունակաբար, երկու չաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին կէսօրից յետոյ: Բաթումից Պարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակնո տրվում են օտարակ սնից պակաս գներով:

Ամիսը մի անգամ կանոնաւոր հաղորդակցութիւն Բաթումի և Անտաքիոնի մէջ, ընդու- նելով ապրանքներ բոլոր հիւսիսային նաւահանգիստների համար:

Ապրանքների եւ ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ ստանալու հա- մար թող բարեհաճէի դիմել ընկերութեան գործակալատարներին՝

ԲԱԹՈՒՄԻՍՏ—պ. Վիկտոր ԴԱՐՅՈՒՆ, Նաբէրէճայա: Թիֆլիսի՝ պ. Օ. Բարե- կենդանանին, Միսիս փող. Պոլափարուսիօի եւ Մայսուրաձէի քարվանսարա: ԲԱԳՈՒՄ—Եղբ. Վ. եւ Ի. Մուսաֆեաններին, Նաբէրէճայա փողոց, տուն Կրասիլնիեանի, № 27: ՆՈՎՐՈՍՍ- ՍԻԳԱ—Վլադիկաւկաի երկաթուղու առեւտրական գործակալութիւն (Ե. չ.) 1—20